

	Լ՝ՆԻ Երեւնի Գոմարը .	71,300,000 Փր .
8 .	Լ՝Ենայի կամրջին	4,800,000
9 .	Լ՝Ետեղ կամարին	4,500,000
10 .	Ս՝ աճառատեղեաց	4,000,000
11 .	Փողոցներու և հրապարակներու	4,000,000
12 .	Լ՝սղերլիցի կամրջին	3,000,000
13 .	() րէնագիր պալատին	3,000,000
14 .	Ս՝ Եժ վաճառանոցին	2,900,000
15 .	Լ՝ քեպիսկոպոսարանին	2,500,000
16 .	Լ՝ արուղէնի որդւոյն պալատին	2,500,000
17 .	Սրբուհւոյն յճնըլիւսի եկեղեցւոյն	2,000,000
18 .	Փառաց տաճարին	2,000,000
19 .	Թղթատան	1,800,000
20 .	Ս՝ անտօմի սեան	1,500,000
21 .	Գարուղէլի յաղթական կամարին	1,400,000
22 .	Լ՝ Եր-Կամրջի կոթողին	1,200,000
23 .	Լ՝ քտաքին ազգաց հետ հաղորդակցութեան պաշ- տօնարանին	1,000,000
24 .	Գիւանի պալատին	1,000,000
25 .	Լ՝ քուեստից կամրջին	900,000
26 .	Տնկոց պարտիզին	800,000
27 .	Յորենի վաճառանոցին	750,000
28 .	Գինւոյ վաճառանոցին	750,000
29 .	Պատղիլի հրապարակին	600,000
30 .	Հրապարակներու արձաններուն	600,000
31 .	Լ՝ իկէսններու	500,000
32 .	Օ՝ անազան աշխատութեանց համար	10,171,000
	Ընդամենը	129,471,000 Փր .

ք ն ա կ ա ն

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ


Սոսի ծառը ¹ :

Սոսին անանկ ծառ մըն է , որուն տերեւները միշտ դալար են ու սաստկագոյն ձմեռներու ցրտին ալ կը դիմանան : Ազդակի վեր կը բարձրանայ՝ ու թսուռն ոտքէ տեւի . անտառի մէջ որ ըլլայ և ուրիշ ծառերէն արգիլուած՝ բունը մերկ կը մնայ , բայց երբոր բաց օդի մէջ ու առանձին տնկուած ըլլայ՝ ընդարձակ ճիւղեր կ'արձրկէ : Լ՝ ք ճիւղե-

¹ Գղ . Pin.

ըն իրարմէ հաւասարապէս հեռաւորութիւն ունին , ու հորիզոնական դիրքով կը տարածուին , և իրարմէ բաւականաբար պզտիկնալոյնին՝ ծառին վայելուչ բուրգի մը երևոյթ ու ձև կու տան . առանկով սոսին դիւրաւ կը զանազանուի ուրիշ ծառերէն :

Լ՝ քոպայի մեծ մասին մէջ , մանաւանդ հիւսիսային ու լեռնային երկիրները , ինքիւրեն կը բուսնի առ ծառս . իսկ տնկուելով՝ դրեթէ ամէն տեղ առաջ կու դայ ու դիւրաւ կ'աճի . սակայն ըստ այլ և այլ դիրքերու և ըստ զանազան կլիմայից տարբեր ժամանակ կը ծաղկի , ու կերպ կերպ կը փոփոխի : () րինակի համար՝ քիչ մը խոնաւ հողի մէջ , մանաւանդ հիւսիսային աշխարհք-



Սոճի ծառք .

ները , ու երբոր անտառի մէջ խա-
փանուած մեծնայ , շատ բարձր ու շատ
շիտակ վեր կ'արձրկուի սոճին . ընդ հա-
կառակն՝ չոր ու ցամաք հողի մէջ , կամ
հարաւային աշխարհքները , շատ աւե-
լի նուազ կը բարձրանայ , բայց աւելի կը
տարածուի , ու երբեմն ինչուան ծամա-
ծուռ կը մեծնայ :

Սոճւոյն փայտը նաւու կայմի համար
խիստ աղէկ կը ծառայէ : Հիւսիսային
երկիրներու բնակիչները տուներ , կահ-
կարասիք ու բալխիրներ կը շինեն ան-
կից . և շատ տեղ ալ ջահեր կը յօրի-
նեն՝ գիշերային ճամբորդութիւններու
մէջ լուսով քալելու համար : Արտա-
քին կեղեւը անանկ թեթեւ է , որ եր-
բեմն ձկնորսները սունկի տեղ կը գոր-
ծածեն զանիկայ՝ ջրոյն երեսը բռնել
տալու համար իրենց ցանցերը : Աերքին
կեղեւը սննդարար նիւթ մըն է , զոր
Աբոնիոյ բնակիչները կ'ուտեն , և կը
զուրցուի թէ՛ Օւկիցերիոյ մէջ ալ հա-
ճարի՝ հետ խառնելով զայն՝ հաց կը շի-
նեն : Աւամէն յատկութիւններէն զատ ,
ուրիշ ամենամեծ առաւելութիւն մըն
ալ ունի սոճւոյ փայտը , որ է՝ խիստ եր-
կար ժամանակ ջրոյ մէջ կենալ՝ առանց

փտտելու . անոր համար շատ անգամաս
փայտը կը գործածեն ջրոյ մէջ անկուե-
լու ցիցերուն , նոյնպէս՝ ջուրի ագուգա-
ներ , ու ինչուան ջրհանի գլան շինելու :

Անապատութիւնները երեսուն տեսակէ
աւելի սոճի կը համրեն . ասոնց մէջ ա-
մենէն նշանաւորն է Ժոլային սոճի ը-
սուածը , զորն որ մենք մեր լեզուին
մէջ Բեէնի կը կոչենք : Ասիկայ ինք-
իրեն կը բուսնի Աւրոսայի հարաւային
կողմերը , ու աւազուտ հողի մէջ աւե-
լի աղէկ առաջ կու գայ : Աս ծառէն
կը հանեն բլեկներ՝ , նաւթը , ձիւթը ,
ու իր խէժին ծխոյն ձանձախարիթը ,
որոնք նաւերու համար խիստ հարկա-
ւոր են : Վաղղիոյ հին Աիլէն նահան-
գին մէջ շատ ետեւէ կ'ըլլան աս բերքե-
րը հանելու , և մասնաւորապէս խէժը ,
որուն գործողութեան կերպին վրայ
քանի մը խօսք զուրցենք : Աս վախճա-
նիս համար սոճւոյ ծառ մը ան ատեն կը
ճղքեն , երբոր այնչափ հաստըցած ըլ-
լայ ծառը , որ ձեռքով մարդ չկարենայ
գրկել զանիկայ : Հասարակ կացնով
մը առանց փայտին փնասելու ծառին
թանձր կեղեւը կը վերցուի , վարի կող-
մէն սկսելով , 4-6 բլթաչափ լայնու-

Թեամբ ու 12-18 բթաչափ բարձրու-
թեամբ : Ա երջը ծառին վարի կողմը
բնոյն վրայ խոռոչ մը կը բանան բաւա-
կան մեծութեամբ, և ետքը 6 բթաչափ
բարձրութեամբ ու 4 լայնութեամբ և
միջակ խորութեամբ քերթելով ծառը,
անկից կը սկսի վազել խէժը : Բայց ա-
մէն շաբաթ այս հարուածը նորոգելու
է՝ քերթուածքին բարձրութիւնը ա-
ւելցնելով, և ոչ երբէք լայնութիւնը .
այս ըսած բարձրութիւննիս ինչուան
12-14 ոտք կրնայ երթալ, որն որ եօ-
թը ութը տարի կը քշէ : Բն ատեն
դարձեալ կը քերթուի ծառը, բայց
նայելու է որ առջի քերթուածքին զու-
գահեռական ու գրեթէ յարակից ըլ-
լայ : Բ կերպով՝ կարգաւ ծառին չորս
կողմը կը քերթուի, որով խել մը տա-
րիներու միջոց՝ մի և նոյն ծառէն միա-
կերպ խէժ կ'առնուի :

Երբ անտառի մը մէջ բլեկնոյ ծա-
ռերը խիստ բազմութիւն են, ան ծա-
ռերն որ շուտով կ'ուզես վերցնել՝ չորս
կողմէն միանգամայն քերթելու է, ու
իւրաքանչիւր տարի աս քերթուածքը
իրեք անգամ սովորականէն աւելի եր-
կնցընելու է : Բ խէժ հանելու գոր-
ծողութիւնը մայիսի կը սկսի, ու ին-
չուան սեպտեմբեր կը տւէ : Բ յնչափ
աւելի առատ կը վազէ խէժը, որչափ որ
օդերը աւելի տաք անցնին և կամ որչափ
որ ծառը աւելի արեւու դիմաց ըլլայ :

Ձիւթը, որ խիժային, հեղուկ ու
սևի զարնող նիւթ մըն է՝ հին բլեկնի-
ները թեթեւ կերպով ու աստիճանաբար
այրելով կը հանուի : Վարձեալ ծառին
արմատներէն ալ կ'ելլայ ձիւթը, և ա-
ւելի աղէկ տեսակ է, նմանապէս աւե-
լի առատ ալ : Երբոր փայտը կամ ար-
մատները մանր կը ջարդուի, մասնաւոր
կերպով շինուած փուռերու մէջ կը դը-
նեն զանոնք . ու հողակոշտով ծածկե-
լով վրանին՝ կրակ կու տան : Ս երմու-
թիւնը դուրս հանել կու տայ զձիւթը
խողովակներու ձեռքով, որոնցմէ մաս-
նաւոր շտեմարաններու մէջ կ'իջնայ :
Ձիւթին աղէկ տեսակը՝ աւելի սևի
զարկած պէտք է ըլլայ, քան թէ բո-

լորովին սև, ու ամենեւին ջրային մա-
սունք պիտի չունենայ . սաստիկ սև
ձիւթը՝ այրած է :

Սոճուոյ ծառին ցեղին մէջ կը տես-
նես բնութեան բարձրագոյն ծառերը .
Լարիչիոյ ըսուած սոճին երբեմն ինչուան
150 ոտք բարձրութիւն կ'ունենայ, ու
իր բունը ինչուան 24 ոտք շրջապատ :
Ուէյմֆրէ սոճին՝ Սիւացեալ՝ Լահանգաց
մէջ 180 ոտք բարձրութեան կը հաս-
նի : Իսկ Արա-Փարիա ըսուած տեսա՛յը,
որ Վիլի մէջ կը գտնուի, 260 ոտք
բարձրութեան կը հասնէ իր գագաթը :
Բ սոճիները հարիւրաւոր տարիներէ
ետքը ան աստիճանի բարձրութեան
կ'ելլան . և այն է զարմանալին՝ որ աս
ծառերուն որոշ տարիքը կրնայ գիտ-
ցուիլ, որովհետև ամէն տարի կարգ մը
ձիւղ կ'արձրկեն :

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Լորտ Պայրըն հռչակաւոր բանաստեղծը իր գը-
րուածքները Մըրրի տպագրատէսին տպել կու
տար, որն որ քերթողին բանաստեղծութիւննե-
րուն մեծ յարգին համեմատ՝ բարձր գնով կ'առ-
նէր զանոնք : Հետեւեալ ցուցակին մէջ կը տեսնեն
ընթերցողք իր քանի մը քերթութեանցը համար
Պայրընի առած ստակը :

Տարին

1812 Պանդխտութիւն Արդաի, Երգ	
Ա և Բ	600 սղեռչ.
1813 Կեաւուր	525 —
1813 Ամուսին Ապիաոսի	525 —
1814 Հէն	525 —
1814 Լարա	525 —
1816 Պաշարումն Կորնթոսի	700 —
1816 Բարիզինա	525 —
1816 Պանդխտութիւն Արդաի, Երգ Գ	1575 —
1816 Բանտարգել Շիլոնի	525 —
1817 Մանֆրէտի	315 —
1817 Տրաուենշ Դասսոյի	315 —
1818 Պէփփոյ	525 —
1818 Պանդխտութիւն Արդաի, Երգ Դ	2100 —
1819 Մազեփիա	525 —
1819 Տոն Ժուան, Երգ Ա և Բ	1525 —
1820 Տոն Ժուան, Երգ Գ, Դ և Ե	1525 —
1820 Դուքսն Վենետիոյ	1050 —
1821 Սարգանաբաղ, Կայէն, Երկու	
Ֆոսփարեանք	1100 —
1822 Վէռնէր, Ձառագէմն, Երկինք	
և Երկիր, և այլն	3885 —
Խառնուրդք	450 —

Բովանդակութիւնը 19,340 սղեռչ.